ԿՈՉՆԱԿ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ

92

22 Նոյեմբերի 2009թ.

Էլեոնորա Էտմեքչյանի Լիբանանյան օրագիրը

շարունակություն

15 հոկտեմբերի 2009թ.

Վաղ առավոտ է, արագ պատրաստվում ենք, մեզ երկար ճանապարհ է սպասվում դեպի երկրի արևելք: Այսօր պետք է տեսնենք Անտիկ Բաալբեքի և Անժարի բերդի ավերակները: Երկարատև բարձունքի հաղթահարում և ահա մենք տեղում ենք, Սիրիայի հետ սահմանից մեքենայով 10 րոպեի ճանապարհի վրա ենք: Լիբանան և Անտի Լիբանան բլուրների միջև գտնվում է հիասքանչ քաղաք տաճարը: Հրաշալի պահպանվել է Վակխայի տաճարը /մեր թվարկության 2-րդ դար/, որը հիշեցնում է Գառնու հեթանոսական տաճարը: Երևակայությունդ լարելով փորձում ես պատկերացնել, թե ինչ տեսք կունենային Վեներայի և Յուպիտերի տաճարները մեր թվարկության 1-3-րդ դարերում: Ժամանակն անխնա ավերել է դրանք: Քաղաքի ծաղկմանն ու զարգացմանը հաջորդել է ավիրումը թուրքական հրոսակների կողմից և բնական աղետներից: Հռոմեական քաղաքակրթության այս մոհիկանների կողքին գտնվում է մի փոքրիկ գյուղաքաղաք, որը տարբեր երկրներից ժամանած հյուրերին ընդունում և ճանապարհում է հյուրընկալ տանտիրուհու պես:

Ժամանակի առջև անզոր է նույնիսկ աստվածային արվեստը:

Սակայն Բեքքայի հովիտը ևս մեկ գանձ ունի մեզ համար: Բեյրութից 58 կմ հեռավորության վրա Անտի-Լիբանան լեռան ստորոտին գտնվում է հինավուրց Անժարը: Վերջինս պատկանում է Օմեյադների արքայական դինաստիայի թագավորման ժամանակաշրջանին: Այս դինաստիան թագավորել է Մուհամեդ մարգարեից հետո Անժարը այդ ժամանակ կայսրության առևտրական կենտրոնն է եղել: Անգին գանձը բնական աղետներից պահպանելու համար տարածքում էվկալիպտներ և կիպարիսներ են տնկել: Հիմա շատ դժվար է պատկերացնել, որ այստեղ եղել են մի քանի պալատներ, մզկիթներ, բաղնիքներ և բազմաթիվ առևտրի կրպակներ:

Նոր արաբական դինաստիան ձեռք չի տվել Անժարը, սակայն ամեն ինչ արել է այն մոռացության մատնելու համար, ինչը հաջողվել էր միայն մասամբ:

Մուսա Լեռ քաղաքից հայերի այստեղ հայտնվելը նոր կյանք է հաղորդել հինավուրց վայրին: Թուրք մարդասպանների մահացու յաթաղանից մահապուրծ՝ մուսալեռցիները 1915թվականին հաստատվում են Անժարում: Հայ շինարարների ձեռքի շնորհքը այս քաղաքին նոր տեսք և երկրորդ կյանք է տվել: Այսօրվա դրությամբ սա օտար հողում հայաբնակ բազմաթիվ բնակավայրերից մեկն է: Հայկական անուններով փողոցներով քայլում են արևահարված մուսալեռցիները, որոնք աղոթում են հայկական եկեղեցում, կրթություն են ստանում հայկական դպրոցներում և անուշահամ խորտիկներ պատրաստում «Անժար» ռեստորանում, որն իր հյուրընկալ հարկի տակ ընդունում է ոչ միայն լիբանանցիների: Տեղի խոհարարների արվեստը վայելելու առիթն ունեցանք նաև մենք:

Օրն ավարտեցինք մեր հյուրանոցի ռեստորանում պաշտոնական ընթրիքով ի պատիվ ս.Գ.Նարեկացուն նվիրված գիտաժողովի փակմանը: Ներկա էին մասնակիցներ աշխարհի բոլոր ծայրերից, մշակութային գործիչներ, գիտնականներ, հայագետներ: Հայ պոետի, փիլիսոփայի, հոգևորականի, միստիկի, աստվածաբանի վառ արվեստը գրավել էի ինչպես հոգևորական, այնպես էլ աշխարհիկ գիտնականների ուշադրությունը:

Հիշում եմ Մոսկովյան կոնսերվատորիայի երգչախմբի ելույթը դիրիժոր Բորիս Տելինի գլխավորությամբ, որոնք կատարում էին Ալֆրեդ Շնիտկեի «Չորս մասից բաղկացած համերգ խառը երգչախմբի համար» գործը՝ Նարեկացու ստեղծագործությունների հիման վրա:

Համերգը տեղի էր ունենում Մոսկվայի Ա.Պուշկինի անվան նորարարական արվեստների թանգարանում Ա.Շնիտկեի հիշատակի օրը: Ելույթից հետո Բ. Տելինը գրում, որ այս համերգը «լիիարավ կարելի է համարել ժամանակակից քրիստոնեական մշակույթի լավագույն երաժշտական նմուշը»:

Սակայն այսօր մեզ բախտ է վիճակված ներկա գտնվել մեկ այլ երգչախմբի ելույթին: Գիտաժողովի փակման առիթով Սեն-Ժոզեֆ համալսարանի մեծ դահլիճում ելույթ էր ունենում «Կոունկ» երգչախումբը: Հոգևոր երգերն ընդմիջվում էին հայրենասիրական և աշխարհիկ երգերով: Դժվար էր պատկերացնել, Էդուարդ Թորիկյանի ղեկավարած համույթի կազմը ներկայացնում են ոչ պրոֆեսիոնալ երգիչներ: Ֆրանսիական Միրեյ անունով երգչուհին երգեց «Էա, Բեյրութ» երգը: Շատ էինք լսել, որ այս երգը ավերված և մոխիրներից նոր կենդանություն ստացած Բեյրութի մասին է: Միրեյ Չխտխչկյանն այնպես հուզումնալից էր կատարում այդ երգը, որ յուրաքանչյուր տակտի

հետ աճում էր վստահությունդ չքնաղ քաղաքի լուսավոր ապագայի հանդեպ:

Իրապես, վեր ել ավերակներից, Բեյրութ, և թող քո հրաշք կերպարանքը չխամրի ռումբերի պատճառած սպիներից:է

«Այուն, այուն» հայկական երգի կատարումը անտարբեր չթողեց անգամ օտարներին: Անահիտ Կետիկյանի թովիչ ձայնը հնչեց ցածր, սակայն աստիճանաբար բարձրացավ և դահլիճն այնպիսի կախարդիչ էներգրայով լցրեց, որ անկարելի էր պատկերացնել, թե նա չունի պրոֆեսիոնալ ոկալիստի կրթություն: Զայնն Աստծո պարգև է: Մարմնավս սարսուռ անցավ. եթե դրախտում երգում են հրեշտակներ, ապա՝ նման ձայնով:

Սիրելի Անահիտ, Աստված քեզ առողջություն և ստեղծագործական նոր ոգեշնչումներ տա:

16 հոկտեմբերի 2009թ.

Այսօր մեզ սպասվում է պաշտոնական հանդիպում, որին երկար սպասում և պատրաստվում էինք:

Բարձրանում ենք լեռը, յուրաքանչյուր մետրի հետ մեր առջև հրաշք տեսարան է բացվում: Զմմառի վանքում ենք, վանքը, հիմնադրված 1749թ.-ին, կրում է ս.Կույսի վերափոխման անունը: եկեղեցում գտնվում է ԱՍտվածածնի պատկերը, որի հեղինակն է Գվերչինին, սա նվեր է իտալացի մի բարեգործից և հետագայում դարձել է վանքի սրբություններից կարևորագույնը: Կտավից Աստվածածինը մեզ է նայում չափազանց թախծոտ աչքերով, զույգ այտերին արտասուքի կաթիլներով: Միայն մայրական սիրտը կարող է այսպես թախծել իր սիրելի որդու համար: Նկարի էներգետիկան շատ հզոր է և իզուր չէ, որ սա հրաշագործ է համարվում:

Զմմառի վանքում գտնվում է Կաթողիկե եկեղեցու Կաթողիկոսական աթոռը: որտեղ էլ պետք է հանդիպենք Ներսես Պետրոս 19-րդ կաթողիկոսի հետ: Ողջույնի ժամանակ չեմ կարողանում հայացքս

կտրել պատրիարքի լուսաշող և բարություն ճառագող դեմքից: Պայծառ հայացք, մեղմ ժպիտ, լսելու և պետմելու մեծ պատրաստակամություն: Գալիք տարի Սրբազանի յոթանասունամյա հոբելյանն է և չնայած իր պատկառելի տարիքին՝ նա լեցուն է ուժ ու եռանդով աջակցելու ինչպես հոգևորականներին այնպես էլ յուրաքանչյուրին, ով ունի դրա կարիքը: Նա երկար հարցուփորձ է անում Ռուսաստանում հայ կաթողիկե համայնքի կյանքի, մեր ուրախությունների և դժվարությունների մասին: Հիշատակելով Լիբանանյան համայնքը այն անվանում է «մայր գաղութ», որտեղ յուրաքանչյուր հայկական եկեղեցուն կից գործում է հայկական դպրոց, դահլիճ, որտեղ կազմակերպվում և ներկայացվում են աշխարհիկ զանազան միջոցառումներ, համերգներ:

Զրույցի ավարտին Սրբազանը բոլորիս վարդարաններ նվիրեց Վատիկանի գերբով, Հռոմի պապեր Բենեդիկտոս XVI և Հովհաննես Պողոս II պատկերներով: Հանդիսավոր կերպով Հայր Գևորգին հանձնեց պարգև՝ նշելով, որ նա արժանի է ավելիին Ռուսաստանում բարդ պայմաններում իր տիտանական աշխատանքի և երկու տարվա ընթացքում ձեռքբերումների համար:

Մենք մեր երևախտագիտությունը հայտնեցինք կաթողիկոսին մեր սիրելի վարդապետի աշխատանքի գնահատման համար Ռուսաստանի հայ կաթողիկե համայնքի անունից:

Աստված պահպանի Պատրիարքին և քաջառողջություն տա:

Այնուհետև մեզ հանդիպում էր սպասվում հայահոծ թաղամաս Բուրջ Համուտի, որն հաճախ անվանում են Սփյուռքի մայրաքաղաք, Մեսրոպյան վարժարանում: Բեյրութի ամենամեծ հայկական վարժարանի տնօրենը՝ Գրեգուար Գալուստը, մեզ ընդունեց իր աշխատասենյակում, որտեղ պատով մեկ փակցված էր 1915թ. Ցեղասպանության հիշատակին նվիրված Երևանում գտնվող հուշահամալիրի՝ Ծիծեռնակաբերդի նկարը: Ոչինչ չի մոռացվել, ոչ մեկ չի մոռացվել:

Դպրոցի կառուցվածքը հետևյալն է. մանկապարտեզ, տարրական դպրոց, միջին դպրոց և բարձրագույն վարժարան: Պարզվում է, որ լիբանանյան ինստիտուտներ ընդունվելու համար անհրաժեշտ է բակալավրի երկրորդ աստիճան, ինչը ստանում են Մեսրոպյան վարժարանում: Ուսումնասիրում են լեզուներ, գրականություն, պատմություն և կրոն հայերեն լեզվով, ինչպես նաև գերազանց տիրապետում են ֆրանսերենին, արաբերենին և հայերենին: Պարոն Գալուստը հպարտությամբ ցուցադրում է մեզ դպրոցի համալիրը, ծանոթացնում է երեխաների հետ: Դպրոցը հագեցած է գիտատեխնիկական նվաճումների վերջին տեխնիկայով, ինչը հնարավորություն է տալիս կրթել բազմակողմանի զարգացած, խորը գիտելիքների և հմտությունների տիրապետող սաներ: Լինելով բավականին նախաձեռնող և ակտիվ անձնավորություն՝ պ.Գալուստը կազմակերպում է բարեգործական ընթրիքներ, հանդիպումներ հովանավորների հետ և հայթայթում է միջոցներ դպրոցի զարգացման, հայ ոգու պահպանման համար:

Դպրոցի բակում կանգնած է Մեսրոպ Մաշտոցի հուշարձանը,

որտեղ լուսանկարվեցինք աշակերտների հետ: Աջ կողմում ս. Փրկիչ եկեղեցին է: Երախտագիտության խոսքերով հեռանում ենք դպրոցից և շարունակում ենք մեր ծանոթությունների հետաքրքիր շարքը մեսրոպյան թերթի խմբագրի՝ Կարինե Թասչյանի հետ, զարմանքով իմանում եմ, որ նա ավարտել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտը, միասին սովորել ենք նույն տարիներին, սակայն տարբեր ֆակուլտետներում:

Իրապես Աստծո Ճանապարհներն

անիմանալի են:

Մեզ սպասում էին «Ազդակ» և «Վանա ձայն» ռադիոկայաններում, որոնք քսանչորս ժամյա եթեր են հեռարձակվում: Այստեղ հանդիպեցինք տնօրենների խմբագիրների հետ, քննարկեցինք լիբանանյան հայերի պրոբլեմներն ու ուրոխությունները: Բոլորին հետաքրքիր է, թե ինչպես են ապրում ռուսաստանյան հայերը: Այստեղ ծանոթացանք նաև հայր Գևորգի լավագույն ընկերոջ Վարդան

Թասչյանի հետ: Նա պատմում էր իր ընտանիքի, երեխաների կրթության, առաջիկա պլանների մասին: Տխրությամբ պիտի նշեմ, որ նրա պլաններում բացակայում էին այցելությունները Հայաստան և Ռուսաստան բացակայում էին: Ցավոք սրտի Սփյուռք ապրում է կտրված հայկական իրականությունից, սակայն Հայաստանի, հայ լեզվի և ավանդույթների հանդեպ մեծ սիրով: Ապրում է ավտոնոմ՝ իր տոներով, ուրախություններով ու դժվարություններով: Նրանք պահպանում են այն բոլոր ժառանգությունները, որոնք ստացել են իրենց նախնիներից, դա բավականին ծանր աշխատանք է օտարության մեջ, և հենց դա է, որ հավաքում է բոլորին հայ եկեղեցու, հայ դպրոցի և դահլիճների շուրջ:

Հայ լեզվի, հայ մշակույթի և ավանդույթների համար կարելի է հանգիստ լինե: Սփյուռքը կպահպանի այն:

Պատմական Բուրջ Համուտի փողոցներում զբոսնելուց հետո մեզ հանիպում էր սպասվում հետաքրքիր, տաղանդավոր անձնավորությունների՝ հայ կաթողիկե եկեղեցու հանճարեղ ներկայացուցիչներից երկուսի հետ՝ հայր Գևորգ Եղիայան և հայր Մեսրոպ Թոփալյան:

Հանդիպումը տեղի ունեցավ բավականին խորհրդանշական Մեսրոպյան վարժարանի ներքին բակում: Հայր Գևորգ Եղիայանը երկար տարիներ տնօրինել է այս վարժարանը և շատ ջանք ու եռանդ է ներդրել դրա զարգացման ու բարգավաճման գործում:

Հայր Մեսրոպի ժպտերես պայծառ

դեմքը և առաջին նվերը Մեսրոպ Հայունի գրական ծածկանունով իր հեղինակած «Աստծուց ս,Հոգուն» գիրքը: Երկար զրույցները հայ լեզվի, պատմության, գրականության մասին ընդմիջվում էին կատակներով և մեր պատմություններով ռուսաստանյան հայերի կենցաղի մասին:

Մինչև ուշ գիշեր զբոսանք ու զրույց, երևում էր, մեր զրուցընկերները չեն շտապում բաժանվել մեզանից: Չկա ավելի մեծ երջանկություն, քան մարդկային արժանավայել շփման ու հաղորդակցման երջանկությունը: Կարելի էր շարունակ խոսել ու պատմել, հարցնել ու պատմել, կամ ուղղակի միմյանց աչքերի խորությունն ուսումնասիրել….

Զգացվում էր, որ հայր Գևորգը մեծ բավականություն է ստանում այս շփումից: Նա խոսում էր առանց դադարի, չէ որ բավականին պատմելու նյութ էր կուտակվել այս երկու երկարաձիգ դժվարին տարիների ընթացքում: Մեր զրույցի ավարտին հայր Գևորգ Եղիայանը դիմեց հայր Գևորգին ասելով. «Գիտես հայր Գևորգ, ինչքան էլ որ դժվար է քո կյանքը Ռուսաստանում, միևնույն է ես քեզ նախանձում եմ»: Ահա այսպիսի անսպասելի ամփոփում իմաստուն և նրբանկատ մարդու կողմից, որը գիտակ է ոչ միայն կրոնական հարցերի այլև մարդկային հոգու: Նշանակում է հայր Գևորգի չարչարանքները Ռուսաստանում իզուր չեն, եթե դրանք գովասանք են բերում սիրելի ուսուցչի կողմից… իսկ դեռ ինչքան անելիքներ կան….

Է.Էտմեքչյան

շարունակելի

22.11.2009թ.

1 Թեսաղոնիկեցիներ
1, 1-10

1 Պօղոսը, Սիղուանոսը եւ Տիմոթէոսը՝
թեսաղոնիկեցիներիդ եկեղեցուն՝
մեր Հայր Աստուծով եւ Տէր Յիսուս
Քրիստոսով: ՝Շնո՛րհ ձեզ եւ
խաղաղութի՛ւն: Միշտ գոհութիւն
ենք յայտնում Աստծուն ձեզ համար՝
բոլորիդ յիշատակելով մեր
աղօթքներում, ՝անդադար յիշելով
ձեր հաւատի գործը, սիրոյ
վաստակը եւ յոյսի համբերութիւնը
մեր Տէր Յիսուս Քրիստոսի, Աստծու

եւ մեր Հօր առաջ։ 4Սիրելի՛ եղբայրներ,
գիտցէ՛ք, որ ընտրուել էք Աստծու
կողմից. 5մեր Աւետարանը միայն
խօսքերով չքարոզուեց ձեզ, այլ նաեւ
զօրութեամբ, Սուրբ Հոգով եւ կատարեալ
վստահութեամբ. գիտէք նաեւ, թէ
ինչպիսի ընթացք ունեցանք ձեր մէջ ձեզ
համար։ 6Եւ դուք, նմանուելով մեզ եւ
Տիրոջը, ընդունեցիք Խօսքը բազում
նեղութեան մէջ Սուրբ Հոգու
ուրախութեամբ՝ 7օրինակ
հանդիսանալով բոլոր
հաւատացեալներին, որոնք
Մակեդոնիայում եւ Աքայիայում են.
8ձեզնից հնչեց Աստծու խօսքը ոչ միայն
Մակեդոնիայում եւ Աքայիայում, այլեւ
առ Աստուած ձեր ունեցած հաւատը
սփռուեց ամէն տեղ, այնպէս որ մեզ
պէտք չէ մի որեւէ բան խօսել այդ մասին,
9քանի որ մարդիկ իրենք իսկ պատմում
են մեր մասին. Թէ ինչպէս եղաւ մեր
մուտքը ձեր մէջ, եւ թէ ինչպէս կուռքերից
դարձաք առ Աստուած՝ ծառայելու
համար կենդանի եւ ճշմարիտ Աստծուն
10եւ սպասելու երկնքից նրա Որդու
գալստեան, որին յարութիւն տուեց նա
մեռելներից, Յիսուսին, որ պիտի փրկի
մեզ վերահաս բարկութիւնից։

Ղուկասի Ավետարան

12, 13-31

13Ժողովրդի միջից մէկը նրան ասաց.
«Վարդապե՛տ, ասա եղբօրս, որ
ժառանգութիւնը ինձ հետ բաժանի»։ 14Եւ
նա նրան ասաց. «Ո՛վ մարդ, ինձ ո՞վ
դատաւոր կամ
բաժանարար կարգեց ձեր վրայ»։ 15Ապա
ժողովրդին ասաց. «Տեսէք, որ զգոյշ լինէք
ամէն տեսակ ագահութիւնից, որովհետեւ
մարդու կեանքը իր կուտակած
հարստութեան մէջ չէ»։ 16Եւ նրանց մի
առակ պատմեց ու ասաց. «Մի
մեծահարուստի արտերը առատ բերք
տուեցին. 17եւ նա խորհեց իր մտքում ու
ասաց. «Տեսնեմ ինչ կարող եմ անել,
քանի որ բերքս կուտակելու տեղ չկայ։
18Գիտեմ, - ասաց նա, - թէ ինչ պէտք է
անեմ. կը քանդեմ իմ շտեմարանները եւ
աւելի մեծերը կը շինեմ ու այնտեղ կը
հաւաքեմ ցորենը եւ իմ ամբողջ
բարիքները. 19ու ինքս ինձ կ՚ասեմ՝ ո՛վ
մարդ, շատ տարիների համար
ամբարուած բազում բարիքներ ունես,
հանգի՛ստ արա, կե՛ր, խմի՛ր եւ ուրա՛խ
եղիր»։ 20Աստուած նրան ասաց.
«Անմի՛տ, հէնց այս գիշեր հոգիդ
քեզնից պահանջելու են, իսկ ինչ որ
պատրաստել ես, ո՞ւմն է լինելու»։
21Նոյնպէս է նաեւ նա, ով իր անձի
համար գանձ կը հաւաքի եւ Աստուծով
չի հարստանայ»։ 22Եւ իր
աշակերտներին ասաց. «Դրա համար
էլ ասում եմ ձեզ. հոգ մի՛ արէք ձեր
հոգու համար, թէ ինչ էք ուտելու, ոչ էլ
մարմնի համար, թէ ինչ էք հագնելու,
23որովհետեւ հոգին առաւել է, քան
կերակուրը, եւ մարմինը՝ քան
հագուստը։ 24Նայեցէ՛ք ագռաւներին,
որոնք ո՛չ սերմանում են եւ ո՛չ հնձում,
որոնք ո՛չ շտեմարաններ ունեն եւ ո՛չ էլ
ամբարներ, բայց Աստուած կերակրում
է նրանց. որքա՜ն եւս առաւել ձեզ, որ
շատ աւելի յարգի էք, քան թռչունները։
25Ձեզնից ո՞վ, հոգս անելով, կը
կարողանայ իր հասակի վրայ մէկ
կանգուն աւելացնել։ 26Արդ, եթէ փոքր
բանի մէջ անկարող էք, այլ բաների
համար ինչո՞ւ էք հոգս անում։
27Նայեցէ՛ք շուշանին՝ ինչպէս է աճում.
ո՛չ աշխատում է եւ ո՛չ հիւսում։ Ասում
եմ ձեզ՝Սողոմոնն իսկ իր ամբողջ
փառքի մէջ նրանցից մէկի նման
չհագնուեց։ 28Իսկ եթէ խոտը, որ այսօր
բաց դաշտի մէջ է, իսկ վաղը հնոց է
նետուելու, Աստուած այդպէ՛ս է
հագցնում, որչա՜փ եւս առաւել ձեզ
պիտի հագցնի, թերահաւատնե՛ր։ 29Եւ
դուք մի՛ մտահոգուէք, թէ ի՛նչ էք
ուտելու կամ ի՛նչ էք խմելու, եւ մի՛
մտատանջուէք, 30որովհետեւ այդ
ամէնը աշխարհի հեթանոսներն են, որ
փնտռում են։ Իսկ ձեր Հայրը գիտէ, որ
այդ ամէնը պէտք է ձեզ։ 31Այլ դուք
հետամո՛ւտ եղէք Աստծու
արքայութեանը, եւ այդ ամէնը աւելիով
կը տրուի ձեզ»։

ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Տեղեկացնում ենք, որ Մեր եկեղեցին նվիրատվություն է ստացել մեր հավատացյալ հայրենակիցներից.

- ✓ Արամ Ղազարյան՝ 10000 ռուբլի գումարի տեսքով:
- ✓ Ստեփան Սիմոնյանի ընտանիքը 3000 ռուբլի գումարի տեսքով:
- ✓ Հովհաննես Սիմոնյան 5000 ռուբլի գումարի տեսքով:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում բարերարներին իրենց աստվածահաճո գործունեության համար և հաջողություններ մաղթում բոլոր ձեռնարկներում:

Հասցե Москва ул. Малая Грузинская 19/2
Հեռախոս
1. 8-903 -1309993 (Հ.Գևորգ Վարդապետ Նորատունկյան)
2. 7-926-9049149 (Հ.Պետրոս Վարդապետ Պետրոսյան)
Ֆաքս 8-495-2522534 (Ext. 119)
E-mail
noradounguian@hotmail.com, ppetros@libero.it moscow@armeniancatholic.ru
Web site
www. armeniancatholic.ru